

СООБЩЕНИЯ

Արժանապատիվ հուշարձան

2023 թ. ապրիլի 25-ին Երևանում՝ Օդակաձև գրոսայգու մի հատվածում (Երևանի պետական համալսարանին մերձ), բացվեց Ազգային արժանապատվության ասպետների հուշարձանը՝ նվիրված հայ վրիժառուներին (Շ. Նաթալի, Մ. Թեղիբյան, Մ. Թորյաբյան, Ա. Գևորգյան, Ա. Երկանյան, Ա. Շիրակյան և այլք): Խոսքը «Նեմեսիս» պատմական հայտնի գործողության մասին է: Այս ծրագիրը բնավ կապ չունի ահաբեկչական գործունեության հետ, այլ արդարադատության յուրատեսակ իրականացում է, քանի որ հայը արդարամիտ է և ազնիվ: Այն նպատակ ուներ պատժել Հայոց ցեղասպանության իրականացնող երիտթուրքական պարագուխներին: Նրանք իրականացնում էին թուրքական զինվորական դատարանի որոշումները հանցագործների պատժի մասին: Ճարտարապետն է Տիգրան Բարսեղյանը:

Հանդիսությունը ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, Երևանի քաղաքապետի տեղակալ Տ. Ավինյանը, քաղաքապետի խորհրդական Կ. Արեյանը, լրագրող, հանրային գործիչ Ա. Երկանյանը և այլք: Պատմաբան Ա. Մելքոնյանը, բարձր գնահատելով պատմական այս իրադարձությունը, հուշարձանի բացումը իրավացիորեն կարևոր երևույթ համարեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի կոթողից հետո: Ա. Երկանյանը նշեց, որ վրիժառուները ինքնատիպ հոգեբույժներ են, քանի որ մեզ բուժում են հուսահատությունից, վատատեսությունից և անելանելիությունից: Մյուս բանախոսները ևս արժեքավորեցին այս միջոցառումը՝ այն դիտարկելով որպես ազգային արժանապատվության և ինքնասիրության յուրօրինակ մի խորհրդանիշ:

Հարկավ, շատ նշանակալից է հուշարձանի հայեցակարգային և իմաստասիրական խորհուրդը: Մեր թշնամիները մեզ պարտադրել են զոհի դեր և գործառույթ՝ մագոխիզմը մեզ համար դարձնելով վարքագիծ, բնավորություն և պահվածք: Մա անթույլատրելի է, անհարիր մեր նկարագրի համար, որը կործանարար է անվտանգության ազգային համակարգի համար: Պատմական ճշմարտությունն այն է, որ հայը հաղթող տեսակ է և մտքի աշխարհակալ, քաղաքակրթության արարիչ:

Այս կոթողը կշտկի իրավիճակը, կլրացնի եղած բացը և կընդգծի հայության ազգային արժանապատվությունը, արդարա հատուցման իրավական դրույթը և պետականության բարձր վարկանիշը: Այն կդառնա մեր հայրենակիցների համար սիրելի և գնահատելի մի վայր, ուր մշտապես հանույքով կայցելեն: Եվ դա կլինի ցանկալի, կայուն և արդարացված ավանդույթ:



Ռուբեն Նահատակյան
25.04.2023